

LE DANUBE

ՀԱՆՊԵՍ ԵՐԹՆՈՐԵԱՅ
ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԵՄԲԱԹ ԵՐԵՐ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ամեն երկրի համար տարեկան 12 ֆր. կամ 5 բուպլի թղթադրամ:

Պարսկաստանի համար տարեկան 8 ֆր. կամ 3 բուպլի թղթադրամ:

Փոստի ծախքը խմբագրութիւնս կը վճարէ:

ՊԱՅՄԱՆՆԵՐ

Ծանուցման տողը 50 սանթիմ է: Հայերէն Պուլկարեւելն եւ Ֆանսերէն լեզուով:

Ամբողջութեամբս զրկուած նամակ կամ գրութիւն ետ չ'արուիր:

Նամակ եւ ծրար պէտք է զրկել հետեւեալ հասցէով:

M. S. TUTUNDJIEFF

Rédacteur du journal "TANOUF"

(BULGARIE)

ROUSTCHOUK

ԱՌ. ԲԱԺԱՆՈՐԴՍ

Կը խնդրեմք "Դանուբ"ի Ազնիւ քաժանորդներէն որ քաշեալ իրենց քաժանորդագինն ընդհուպ յղեց խմբագրութեանս եւ ընկալագիրս ստանալ. որպէսզի կարենամք առաւտանիս մեր ներկայ նկատարին:

ԽՈՐԷՆ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍ ՆԱՐԳԷՅ ՈՉ ԹԷ ՓԻՂՕ-

ՆԱԶՈՒՐԿ ԱՅԼ ՊԱՇՏՈՆԱԶՈՒՐԿ

Այս խնդրոյ մասին մեր նախորդ թերթով խօստացած էինք գրել բայց մեզ հասած նամակներն զմեզ կարող չեն ընել մեր ընթերցողաց հետաքրքրութիւնը կատարեալպէս գոհացներու վասն զի կը զգուշանամք ներշնչուելէ այնպիսի նամակներէ որք կրնայ ըլլալ որ, հակառակ զայն մեզ գրողներու պատուասիրութեան եւ ուղղամտութեան, սըխալ մի տեղեկութիւն պարունակեն:

Այս խնդրոյ մասին մինչև ցարդ մեր մէջը գոյացած համոզումը համառօտիւ կը պարզեմք մեր ընթերցողաց խօստանալով նաև յառաջիկային գրել նաև ստոյգ տեղեկութիւններ որք զտուած ծեծուած եւ ճշմարտութեան բովէն անցած լինին մինչև անգամ մեր համոզմանս եւ մեր փափաքինս ալ հակառակ լինին:

Լուսինեան Արքեպիսկոպոս պաշտօնազուրկ եղած է Ալըգեան Խորէն Պատրիարքի տնօրինութեամբ. Պոլսոյ ամեն Հայ եկեղեցեաց մէջ ալ այս մասին կոնգակ կարդացուեր է. չեմք ուզեր քննադատել այդ Պատր. կոնգակը որ կարծես հաւատաքննութեան ու խտեալ պէտի Պետրոս Արպուէզի դիւանատունէն ելած է. խեղճ Լուսինեան. տաղանդով, տիտղոսով, գիտութեամբ, ուսմունքով, փախար կաթօրիկութեան կաշկանդիչ եւ խեղդիչ մթնոլորտէն ու այսօր մատնուած ես աւելի մի վատ մթնոլորտի. Հայութիւնը այժմ այնքան չի լսեր իր Պատրիարքի ձայնին. յուսո՛ւ Սրբազան Հայր որ Հայը այժմ իր սրտէն եւ հոգիէն կը թելադրուի եւ մի օր ճշմարտութիւնը պիտի ամէցնէ քու թըշնամիներդ:

Երջանկայիշատակ Ներսէս Վարժապետեանի սուրբ անձինին հետ կարծես Հայոց Պատրիարքարանն ալ 'ի սպառ փակեցաւ եւ նրան տեղ մի ապիկար Պատրիարք գրուեցաւ Գուրգարուի այն նուիրական չէնքին մէջ ուր երբեմն Հայուն փառքը, յոյսը կը տիրեր. այժմ Ալըգեանի մը անիրաւ հրամանները եւ իր փառաց համար թղթեր ու կոնգակներ կը խմբագրուին:

Որո՞ւ հիղինակութիւնն է այս ազգաւէր քաղաքականութիւնը, Վեհապետեանի. իսկ արդի Ալըգ-

եան զայն նուիրագործեց և ճոխացոյց. ու այդ քաղաքականութեան ալ զոհ կ'երթան տաղանդներ որք պիտի նպաստեն Հայութեան. չեմք ուրիշ հաշուել թէ Լուսինեան քանիերորոյդ զոհն է այդ Ռոտենական քաղաքականութեան. Լուսինեան որ ազգասիրաց ծանօթ երրորդութեան մը հոգին է. նա մնացած է միայն այն սուրբ գաշնակցութենէն իր գաշնակիցք և ուխտակիցք մեռան. այլ ինքը ողջ է և իր ընկերաց կտակը գործադրելու համար չ'ուզեր բաժնուիլ կեդրոնէն, այլ ահաւասիկ Կ.Պօլսոյ Պատրիարքը իր ծուռ քաղաքականութեան մէջ այնչափ յառաջ կերթայ որ պաշտօնագրուրկ կ'ընէ զինքը: Բարդուղիմէոսի մնացած է աւելի նոր զահեր պատրաստելու գործը:

Խորէն Պատրիարք Աշրգեան ձանձրացած կ'երեւի Մագրի գիւղի օդէն և Կաթողիկոսանարու անուրջներուն մէջ կը գտնուի. առանց միտքը բերելու Արմաշու վանքին մէջ բաարքեայ ուտելը և սոխ ու սխտոր ծամելը և ինք երբ այդ Կաթողիկոսացման անուրջներուն մէջ տարուբերած ատենը չի գիտեր խեղճը որ օր մը Բարդուղիմէոսը գաւազան 'ի ձեռին Մագրի գիւղ պիտի երթայ իրեն հըրամայելու «հայտէ եղբայր Սրբազան ալ գործ չ'ունիս հոս կարասիներդ ժողուէ գնա՛ վանքդ, Պօլսոյ Պատրիարքական գահի վրայ ես պիտի բազմիմ: Այլ ազնիւ ընթերցող մի ըսեր, Կաթողիկոսական անուրջներն մեր ամեն Եպիսկոպոսներն քիչ թէ շատ ունին. մեր Աշրգեան Պատրիարքը ինչո՞ւ չ'ունենայ և ըստ այնմ չ'աշխատի և բոլոր ջանքը 'ի գործ չի դնէ. կը նայի որ իր արժանեաց վրայ հազարապատիկ կշիռ ունեցող ո՞վ կայ. Լուսինեան Սրբազանը. կը գտնէ միջոցը և զայն պաշտօնագրուրկ կ'ընէ, չի գիտեր որ Լուսինեանի մտքէն անգամ չ'անցնիր Կաթողիկոսացում. նա իրեն համար յատուկ ապարէզն ունի, բայց Աշրգեան Սրբազան իր երկիւղն ունենալու պատճառներն ունի. Լուսինեան Սրբազանի տաղանդը, ազգասիրութիւնը և հոշակը իբր ուրուականներ գիշեր ու ցերեկ կը սարսափեցնեն զինքը թէ 'ի Մագրի գիւղ և թէ 'ի Գումգաբու. սա է պատճառ նրա պաշտօնագրուրկ լինելուն:

Լուսինեան Սրբազան իր գլխէն սև շղարչը հանելով Լուսաւորչական Հայութեան գիրկը դառնալէն 'ի վեր նպաստած է Հայութեան զարգացման. ասիկայ մի փուլ է Աշրգեանի սրտին. մի փորձով ասկէ յառաջ Կաթողիկոսութենէ դարձած մի վարդապետ նորէն իր տեղն վերադարձուց այժմ այս ձևով կը ջանայ Հայուն ծոցէն կորզել Լուսինեան

Սրբազանը. չի դանդաղիր իր հարուածը տալու կը պատրաստէ կոնդակը ու կարգալ կուտայ Հայ եկեղեցեայ մէջ, և որպէսզի այս անգամ Հայոց աչքին մի փոշի ցանէ, ասոնք բալօրն ալ խաղեր են զոր պատմութիւնը կ'արձանագրէ իր էջերուն մէջ. համարենք թէ Լուսինեան Սրբազան Հայութեան պարկեշտութիւնը վերաւորող մի պակասութիւն ունեցած է. մեր Պատրիարքը կրնա՞յ հաւատաւ այսօրուայ զարգացեալ Հայութիւնը թէ բոլոր Հայ կղերականութիւնը զերծ է այդ պակասութիւնը ունենալէ. (ինքը կը կարծէ որ Արմաշու վանքի պատերէն գաղտնիքներ դուրս չէին ելլեր). բայց ինչո՞ւ յուզուեցան այն օրը երբ առակախօս մի տաղանդաւոր Հայ վարդապետ իրենց երեսին պոռաց Պատրիարքարանի մէջ «Սրբազաններ խելքերնիդ գլուխնիդ ժողուեցէք ես Ձեր բոլոր կերած ապուրներն գիտեմ. ինծի առակախօս վարդապետ կ'ըսեն ձայն ալ ունիմ գլխի ալ ունիմ անգամ մը գլխուս խալբախը նետելու ըլլամ Ձեր ամենուն ալ մօրուքները ժողովուրդին փետտել կուտամ. և սկսաւ անոնց մէկիկ մէկիկ գաղտնիքներն թուել. որով ամենքը յապուշ կրթեալ ու շուարեալ գոչեցին գնա՛, գնա՛, ուր կ'ուզես գնա՛, ինչ կ'ուզես ըրէ՛ վարդապետ, բայց մեզի հանգիստ թող. այս եղաւ իրենց պատասխանը. երբ Աշրգեան պարկեշտութեան խօսք կ'ընէ մենք պիտի պարսաւորինք Արմաշու վանքի սենեակներն խօսեցնելու. . . . :

Բ Ո Ւ Ս Ճ Ո Ւ Գ

(Երբեք Երբեք Երբեք Երբեք Երբեք)

Տեղւոյս երիտասարդութեանց մասին շատ բան չ'պիտի գրենք զի ստամոքսնին նիհար է, շատ բան գիւրաւ մարտելու վարժ չեն, նախ թէ այլ գծուծ գրպանաշորթ ազգասէրներ իրենց գովելով խելքերն գլուխներէն տարեր են, մնացել է չոր գանկերն, որով երբ ո՛ր է ձայն կամ բաղխիւն կ'ընդհարի այդ գանկերէն իսկոյն անախորժ արձագանքներ դուրս կուգան. բայց միթէարելի է որ գէթ այդ նուաստ գրպանաշորթներն իրենց գոյններն գամ առ գամ դուրս տալով տեղւոյս երիտասարդութիւնն ալ սկսաւ զգալ իւր պատրանքն, այսօր այդ պատրանաց զազիր քօղը մէկդի ձգած կը փորձեն մի տարբեր ուղղութիւն ստանձնել:

Մեր ըսածներուն իբր ապացոյց առաջ բերեմք տեղւոյս երկրասարդութեան մի քանի դործերն որք ակամայիս գործած են աւելի ուրիշներու թելադրութեամբ քան իրենց կամեցողութեամբ. ինչպէս սոյնի նախորդ շարունակութեան մէջ ցոյց տուած ենք մեր տուններու թիւը 180էն 190 կը բաղկանայ. այս բնակութիւնը 100—120ի չափ երկրասարդներ ունի (չափահասները ասոնց հետ գործ ընել չեն զիջանիր) ասոնցմէ 20—30ը արհեստավարներ լինելուն պատճառաւ միշտ իրենց ամենօրեայ գործերով կը պարապին առանց ազգային հարցերով զբաղուելու, մեզ կը մնայ անդին 60—70ի չափ երկրասարդներ ասոնցմէ զեղջենք 10—20ը որոնք բոլորովին ազգային կեանքէ հեռի կ'ապրին, և չեն ուզեր ու եւ գործի միջամտել, այլ ունին իրենց յատուկ հետաքրքրական զբաղումներն, կը մնայ անդին 60—70 պատանի երկրասարդներ որք ունին իրենց յատուկ կուտակցութիւններն ու ընկերութիւններն, բայց միայն խօսք այլ ոչ գործ և երբ մարդ ասոնք կը գիտէ կ'ախոսայ, և կը հառաչէ, թէ արդեօք այս անմեղ երկրասարդները միմեանց. ազգականներ՝ հօրեղբորդիներ, քեռորդիներ, սանիկներ, ևն. ինչ ունին միմեանց դէմ հակակարծիք և անմիաբան և առանց իրենց մէջ մի համերաշխութիւն գոյացնելու քայքայած են իրենց ունեցած ընկերութիւնները որք կրնային լինել իրենց համար լաւ խօսարաններ և լսարաններ և իրենց թատերական խումբը. ահա այս ամենուն մեզքը կը ծանրանայ մեր մի քանի ազգասէրներուն վրայ որք Հայ ժողովուրդը և Հայ երկրասարդութիւնը միմեանց հետ հաշտ և միաբան պահելու տեղ, կարծես ամեն ճիգ թափելին զանոնք բաժնելու և միմեանց դէմ զինելու, և ասոնց ցանած որոմներու երեսէն մեր տեղացի փոքրաթիւ երկրասարդութեանը մէջ կազմած են մի քանի ընկերութիւններ, որոնք իրենց սաղմնային դրութեան մէջ մեռած են, մինք այժմ այդ ընկերութիւններուն հիններուն անունները մոռնալով վերջի հոգեվարներու անուններն մէջ բերենք. (Գլխաւորապէս, Հայկազեան, Արամիան սանուց, ևն) ասոնք իրենց դրամագլուխներն ունեցել են բոլոր ճարպիկ ու ճարտար գանձապահներու տուած հաշիւներն բարեմիտ անգամակիցներու զղուանք պատճառներուն համար աչք գցած ու մոռցած են. բայց մենք իբր հրապարակազիր կարծեմ իրատես կ'ունենանք հարցնել թէ պ. գանձապահներ, չիթ առ չիթ արիւն քրտալինքով անմեղ և ազգասէր Հայ մանկույն տուած

լումաներն իւրացնելը միթէ անխղճութիւն չէ, և միթէ նրանց պարտաւորցնել չէ որ ուրիշ անգամ այս օրինակ ձեռնակներէ հեռի փախչին ու չի մասնակցին: Արդ ես իբր Ձեզ ամենամտերիմ բարեկամ անկեղծօրէն խորհուրդ կուտամ որ այդ փողերը մէջտեղ բերէք և տաք այն ազնիւ և պատկառելի ազգայնոց որք անցեալ հինգշաբթի դիշեր (23 Յունվար խորհած և որոշած են մի ազգային Գլխաւոր բանալ հետեւաբար գլխաւոր պիտի սկսի նիւթական ուժով և քանի շատ ունենայ նիւթական ուժ այնչափ շուտ և կանոնաւոր երեւոյթի տակ պիտի ներկայանայ նա մեզ. և կարծեմ ինչպէս մեզ հետ շատեր երբ առիթ է ներկայացել այդ ընկերութեան մասին խօսել, շատեր մեզ պէս խորհած են թէ այդ ընկերութեանց գանձապահներն անվստահ մարդիկներէ վստահելով կը փնտռեն վրտահաշի մարդիկներ արդ, միթէ վերեւ ակնարկած հինգշաբթի երեկոյեան ժողովի ազնիւ ազգայիններէ աւելի վստահելի ո՞վ ունինք. ուրեմն կարգն եկաւ նրանց տալ համերաշխութեամբ և սիրով գործի սկսելու համար:

Քաղաքիս մէջ միութարական է, Աղքատասիրաց ընկերութեան, գոյութիւնը որ գրեթէ 5—7 տարիներէ ի վեր հաստատուած է 3—4 անձնաւորութեանէ բաղկացեալ արհեստավար ազգայիններէ այս ընկերութիւնը վառեալ ազգային նախանձախնդրութեանէ չ'թողուր մուրալ Հայ ազգային ու արհեստիկն և կամ պատահական անփող ուղեւորին և այս ընկերութեան շնորհիւ քաղաքիս մէջ մի հատ Հայ մուրացիկ չ'կայ. ընկերութիւնը կը հոգայ սոցա ամեն պիտոյքը, տարին մի անգամ հաշիւ ցոյց տալով ազգին ներկայացուցիչ անգամոց, որով քաղաքիս ազգայնոց ամենին սերտ համակրանքն կը վայելէ:

Քաղաքիս մէջ մեծ աղաներու խորհրդով և կամ աւելի ճիշտն ասած ուրիշներէն ընդօրինակուելով հաստատուած են 1890 Յունվար 1էն սկսեալ «խնամօրդական ընկերութիւն», մը որոյ նպատակն է հրապարակի արժեթուղթեր գնել արտադրած շահը անգամայ մէջ բաժանել և շահու բաժինէն իբր թէ 0/0ին 20 ալ ազգային հաստատութեանց պիտի յատկացուի, բայց մենք գեռ այդ ընկերութեան հունձքը չը տեսնալով տասանորդի մասին ոչինչ ունինք խօսելու:

Դարձեալ ուրախ ենք որ գէթ այժմ բարձուած են քաղաքէս կեղծ ազգասիրական կուտակցութեան գաղափարները, և այս գաղափարներուն անհետա-

նալուն պատճառն է ազգասէր կարծեցեալ օրկաններու բազմաթիւնը եւ կեղծ գործակաւորներուն եւ կամ ներկայացուցիչներուն անհետանալը. եւ այժմ տեղացի երիտասարդութեան իրենց տխուր փորձով համոզեցին թէ, «գուք մեզ համակրելէ ե հետեւելէ յառաջ պարտաւոր էք միմեանց համակրել եւ միախորհուրդ գործել»:

Տեղա պանդուխտ ազգայիններ չկան, եւ ոչ ալ հրապարակի Հայ բեռնակիրներ այն պատճառաւ որ գնչու թուրքեր եւ թալթարներ կը կատարեն ամենաստոր գործեր, Հայը չը զիջանելով այդչափ ցած գնով փոխարինել իւր քրտինքը դիմած չէ մեր այս քաղաքը:

Այս տեղ կը հաշուին ինեւ մօտաւորապէս 20—25 պանդուխտ ազգայիններ այսինքն իրենց հետ ընտանիք չունեցող երիտասարդներ եւ չափահասներ, որք եկած են Պօլսէն, Վանէն, Սերաստիաէն եւ այլ տեղերէ, ասոնց ընդ ամենքն ալ Հայ եւ Եւրոպացի վաճառականաց գործերի մէջ աշխատողներ են, եւ իրենց սահմանի մէջ պարկեշտ դիրք մ'ունին, կ'ապրին աւելի մօտ իրենց գործատեղիներուն, Հայերու հետ շատ քիչ յարաբերութեան մէջ են, այսու հանդերձ դիտած եմք որ տարին 3—4 պանդուխտ ազգայիններ այս տեղ կ'ամուսնանան տուն տեղ կը կազմեն եւ ալ Հայրենիք չեն վերադառնալ:

ՌՈՒՍԱՀԱՅԵՐԻ ՀԱՄԱՅՄԱՆՈՒՄԸ ԳԵՊԻ ՏԱՃԿԱՀԱՅԵՐԸ, ՆՐԱՆՑ ՀԱՄԱՅՄԱՆՈՂՈՒԹԻՒՆԸ. ԳՈՐԾԵՐԻ ՆԵՐԿԱՅ ՎԻՃԱԿԸ ԵՒ ԹԷ ԻՆ՞Չ ԱՐԵՒ ԵՆ ՏԱՃԿԱՀԱՅԵՐԸ:

(Եւրոպական լրագրաց Եւրոպական)

Կան մարդիկ որ վերջի ասելիքը առաջ են ասում ընթերցողին սրտմաշուք չը պատճառելու համար. գտնվում են էնպէսներ էլ, որ առաջինը ասելուց յետոյ վերջապէս մոլոր են թողնում, մենք էգպէս չենք ուզում անել. այլ ցանկանում ենք ասել այն ամենը՝ որքան կարելի է լի է ասել, զգուշանալով առ այժմ կարգ մը անշնչեմէնք: Փլիսաւորաբար ուզում ենք մատնանիչ անել եւ ցոյց տալ Տաճկահայերի երբեմն գործառնութիւններն որոնք Ռուսահայ «Խոյն-Բաշի» կամ չը գիտեն եւ կամ ճշմարտութիւնը խօստովանելու եւ յայտնի արժանիք ու առաւելութիւններն գնահատելու աշխուհիւթիւնից զուրկ են:

Տաճկահայք, մանաւանդ Պօլսի գաղթականութիւնը հինգ հարիւր տարուայ ընթացքում շատ ու շատ բաներ են արել, եւ թէ՛ որպէս վարձատրութիւն իրանց իմաստուն կենցաղավարութեան եւ վարչագիտութեան՝ զանա-

զան առանձնաշնորհումներ ձեռք բերել են Օսմանեան Մեծադոր Սուլթաններից վաւերացած:

Ա. Անհաշիւ զոհարելութեամբ պահել ու պահպանել են Ս. Գրիգոր Լուսաւորչու — Հայոց կրանեալ Հայրապետի իսկական աջը, եւ նրա իշխանաշուք յայտնութիւնը կիրկիրայում, որը ընծայել է ազգին Գրիգոր Վրկայաւերից, Ներսէս շնորհալից, Ներսէս Լամբրոնացիից յետոյ Աշխատեան մեծահոգի Կիրայոսներ, որոց վերջինը՝ ամենից առաջ գնահատելով Ներսէս Պատրիարք Վարժապետանի արժանիքը ինքնայնաբար օժեց նորա օրհնեալ ճակատը, բարձրացուց Եպիսկոպոսական աստիճանին եւ մեծագին ընծայուք վերադարձուց ի Պօլս: Մինչեւ այսօր Կիրկիրայ գահակալ Կաթողիկոսներին հաջորդող Կաթողիկոսներն են տալիս, որ ասել է, Առաջնորդ Թագաւոր:

Բ. Ս. Յակոբ Գլխադիր առաքեալի ակնոյն պահել են Երուսաղիմում, մեծապարկամ եւ ազգավայել վեհութեան մէջ: Ձեռք բերել են այնքան իրաւունքներ դարձեալ (սամանեան Սուլթաններից եւ Խալիֆաներից հաստատուած, որոնք մինչեւ այժմ օտար Քրիստոնէից նախանձն է գրագում — իրաւունքներ, անօրինական Սրբազան կառուածներ, թանկագին եւ բազմաթիւ յիշատակներ:

Գ. Հաստատու են Պօլսի Պատրիարքութիւնը Փաթիհ Սուլթան Մուհամմէտի ժամանակ, սկսած Յովակիմ Պատրիարքից, մինչեւ երկրորդ երանեալ Ներսէս Պատրիարք Վարժապետեան, որոնք եկեղեցական ու աշխարհական վարչութիւնը միացնելով յանձին Պատրիարքութեան, առանձնաշնորհեալ իշխանապետութեամբ հրակել են չորս միլիոն ժողովրդի, պահելով նրանց Հայ Բրիտանեական հաւատի մէջ:

Դ. Պահպանել ու պաշտպանել են Հայ լեզուն, Հայ գրականութիւնը, ո՛չ թէ՛ Քրիստոնեայ Ռուսիոյ Ամենաօղորմած վեհապետութեան հովանոյն ներքեւ, այլ այլապէս եւ այլաբան մահմետական տարրի մէջ:

Ե. Պահել են իրենց հայրենիքը մարտիրոսական դիմացկունութեամբ օտարի առջեւ:

Զ. Ունեցել են ամիրայութիւն, որոնք նախախնամալիս հոգածութեամբ անթիւ ու անսահման բարիքներ արել են. չինել են եռեսուն եկեղեցիներ, կրօնքը, ազգութիւնը պահող սրբատեղիներ, նոյնչափ եւս կրթութեան տեղիք — ձեմարան, վարժարան, հիւրանոց ու դպրանոց, յատկացեալ եկամուտներով եւ Սուլթաններից հաստատուել տրուած վաճառքներով:

Է. Շինել են հիւանդանոց, անկեղանոց, յիմարանոց եւ որբանոց, հիմնադրուած Պէդէան Յարութիւն անգուգական բարերարից եւ սասարուած Պալեան գալֆայներից եւ Տատեան պէյերից, մինչեւ ներկայ հոգարարութիւնն, որոյ խնամօք եւ տառաձեւան շնորհներով պատսպարվում են այժմ եօթը հարիւր կարօտեալներ, ամենամեծ մասամբ Հայաստանցի պանդուխտներ: Մինչեւ մեծախօս ու պարծենցող Թիֆլիզը՝ երկու դարեւ երկու կարօտ ու չքաւոր մարդի համար մի օր հանգրստացնելու ախոռ մը իսկ չ'ունի:

Ը. Հաստատու են Եւրոպական լրագրաց Եւրոպական որը ընդունուած եւ տպագրուած է Մեծադոր Օսմանեան Պետութեան

պաշտօնական օրինագրքին մէջ Նիւ-Կի-Մէյքէ Էք-Ֆէյն խորագրով, եւ որին չ'նայելով շատ մը պակասութիւններին, մի տեսակ ազգային իշխանութիւն ասել է նոյն իսկ Վ. Սուլթանի մայրաքաղաքին մէջ. որը վառել է Ազգային ոգին, եւ զարկ տուել է շատ գործերի, մանաւանդ դատարարութեան հարցին, չը հաւանած Տաճկաշայը՝ իրա մայրենի լեզուն, տիրապետող թուրքերէնը գիտնալուց զատ, ծանօթ է նաեւ մի քանի եւրոպական լեզուներին:

Թ. Հիմնել են Կեդրոնական վարժարան ապահովւող եկամուտով, ձեռներեցութեամբ Ներսէս Պատրիարքի եւ բարօք մատակարարութեամբ Ունճեան Աբիկ էֆէն-տիի եւ իւր ջանասէր ընկերներին, որոյ մէջ կրթւում են այժմ ամեն կարգի ազգային պատանիներ, ձրիապէս ընդունուած դաւաճայիններ:

Ժ. Հիմնել են Բերայ ըծուած ամենանշանաւոր թաղի մէջ, օրիորդների ձեռագործութեան արուեստանոց, մասնաւոր ջանիւք եւ հեղինակութեամբ Նուրեան Յովհաննէս էֆէնտիի, գործ հիանալի եւ արդիւնաշատ, որի անունը սեւ Հայկէնէր սեւազոյն ներկայացրել ուղեցել են:

ԺԱ. Հիմնադրել ու կազմել են Միացեալ ընկերութիւնք որը քառասուն վարժույններու մէջ, Հայաստանում եւ Կիւրիկիայում չորս հազար մանուկների, հանգամանքների թողարտած սահմանում ուսում է տալիս:

(Կը շարունակուի)

ՎԷՏԵՐԱՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԽՆԴԻՐ

Ազգիս համար այսօր առաջնակարգ խնդիրն է Կաթողիկոսականը. գոհ եմք որ «Դանուբ» իւր առաջին թիւերով զբաղուել սկսած է այս աւագ խնդրով, որոյ մասին գրուած յօդուածներն կարգալու բազմն ունեցանք:

Թէպէտ շատ տեսակետներով լաւ կը լինէր որ Հայրապետական Աթոռն փոխադրուէր մի ազատ երկիր եւ այդ տեղ կարողանար Հայոց ազգը ընտրել ազատութեն իւր Հայրապետն, առանց արտաքին ճնշումի եւ այլն, ըստ օրինաց թէ «Եպիսկոպոսն որ ընկալցի զառաւելագոյն թիւ ձայնիցն, հռչակի Կաթողիկոս ամենայն Հայոց»։ Բայց որպէս կերելի, այս անգամ ուան համար չէ եւ չ'կրնար լինել այդ տեղափոխութիւն. ուստի թողումք այդ կէտը եւ անցնիմք մեր ըսելիքներուն:

Ո՞վ պէտք է լինէ Կաթողիկոս՝ տհա մի հարց որուն կաւրենալ պատասխանելու համար, պէտք է նախ հարցնել թէ մեր Եպիսկոպոսաց շարքին մէջ ո՞վ կայ արժանաւոր ամենայն Հայոց Հայրապետ կոչուելու: Տաճկահայոց մամուլը դեռ լուռ է ընտրելեաց մասին եւ մինչեւ իսկ ժամանակը եկած հասած է դեռ

երեսփոխանական ժողով չ'գումարեցաւ զբաղելու մի միակ Կաթողիկոսական խնդրով. ինչ կ'ընէ Պատրիարքը, նորէն ժողովուրդը քնացնել կուզեն. արեւո նման պայծառ կ'երևի որ պէտք է պատգամաւորներ երթան ի Ս. Եջմիածին ուղղակի մասնակցելու ընտրութեան. անցեալ դասերը թող խրատ լինի մեզ. այլ ես համոզուած պէտք է լինիմք որ օտար կառավարութիւնք սոսկ առաջնորդութիւն կը ճանաչեն զԿ. Պոլսոյ Պատրիարքութիւն, եւ իբր մի վիճակ, երկու ձայն կը ճանաչեն սմա, ոչ փոխառն եւ հինգ. ամէն կերպով լաւագոյն է Տաճկաստանի պատգամաւորներն զ'նան, յայնժամ անպատճառ Կաթողիկոսն Տաճկաստանէն կը լինի եւ յուսայի է որ մի ազգանուէր Եպիսկոպոսի վիճակի ընտրութիւն, սպասեմք եւ տեսնեմք թէ վերջապէս ինչ պէտք է ընեն Պատրիարք եւ երեսփոխանութիւն, նորէն անլուծանելի եւ անվերջաւոր ծրագիրներ պէտք է կազմեն, թէ առաջին հստակ պէտք է ընդունին ուղղակի մասնակցութիւնը. կը յուսացուի որ այս անգամ խելքերնին զլուխնին եկած է. յուսով սպասելով, անցնիմք մեր գրելիքներուն:

Ռուսահայոց մէջ ոմանք ալ Սեդրակեան Եպիսկոպոսի Կաթողիկոսացման փափաքող են. աւելորդ է այլ եւս խօսիլ սորա մասին, զի վերջերս լաւ դուրս եկաւ իւր գոյնը. ինչ ծաղիկ լինելն իմացանք. հոտոտողին քիթը կ'ընկնի. այդ Եպիսկոպոսը թող դեռ չարունակէ օտարասէր ցոյցեր անել որպէս զի դիւրութեամբ Կաթողիկոսանայ (!), թող օտարին աչքը մանէ, հեռանալով ազգի աչքէն, Տաճկաստանէն ոչ ոք քուէ կուտայ. իսկ ի Ռուսաստան ազատ են տալ իւր ուխտեալ համախոհք:

Ռուսաստանի Եպիսկոպոսաց մէջ ուրեմն աչքի զարնող եկեղեցական չ'կայ ի Կաթողիկոսութիւն, ամենէն շատ գովուածը Արիստակէս Սեդրակեանն էր, որ վերջերս ցոյց տուաւ իւր գոյն եւ պէտք է ըսել թէ շատ սուղի նստաւ ազգին համար. Ռուսահայ եկեղեցականաց մէջ եթէ լինի մինչեւ իսկ արժանաւոր, ինչ ինչ տեսակէտներով խելացութիւն չէ Կաթողիկոսը Ռուսաստանէն ընտրել, այլ Տաճկաստանի Եպիսկոպոսներէն ընտրելու է:

Բայց մաղելով մեր Տաճկահայոց Եպիսկոպոսներն, ճշմարիտ խօսելով ոչ մին չեմք կարող արժանաւոր համարել ի Կաթողիկոսութիւն. ազգի Ընդհանրական Հայրապետ լինելու համար, ինչպէս ըսինք, յանդուգն ոգի, ուշիմ հեռատեսութիւն

և անհուն վարչական կարողութիւն հարկաւոր է ունենալ. արդ ո՞վ կայ Տաճկահայոց Եպիսկոպոսներու մէջ այս յատկութեամբ օժտեալ անկեղծ խօսերով, ոչ ոք: Մեք այլոց նման չեմք կարող դիւրութեամբ ընտրելիներ չարել:

Եթէ Տաճկահայերը ուղղակի մասնակցին, հաւանական է որ ընտրուին կամ Երուսաղէմի Պատրիարքը, կամ Պօլսոյ Պատրիարքը և ոչ նուազ հաւանական ընտրելի են Խորէն Արքեպիսկոպոս Նարպէյ և Մատթէոս Եպիսկոպոս Իզմիրեան. բայց Յարութիւն Սրբոզան շատ լաւ կարող է վարել մի միակ իւր արդի պաշտօնը, Ալըքեան Պատրիարք իւր արդի պաշտօնը չէ կարող վարել, և այսպիսի թոյլ և խեղճ մարդու մը, աւելի բարձր պաշտօն յանձնել, յիմարութիւն է: Ալըքեանի համար հըրաշք էր Պատրիարք ընտրուիլն. Տէր մի արասցէ որ Կաթուղիկոս լինի, թեպէտ ինքն անհուն փափաք ունի առ այդ:

Նարպէյ Սրբազանի գալով, թեպէտ ծանօթ իւր բարեմասնութեամբ, լեզուագէտ, ճարտասան և բաւական հեռատես, բայց ափսոս որ չ'ունի յանդուգն ոգի, մի յատկութիւն որով անպատճառ օժտեալ պէտք է լինի Հայոց Հայրապետն:

Մատթէոս Եպիսկոպոս բաւական առդանդաւոր մի եկեղեցական է, Աստուածաբան, և վարչագէտ, այլ սակայն կը պակսին իւր մօտ հեռատեսութիւն և յանդուգն ոգի. աւելի երկարել և փաստեր յառաջ բերելու պէտք չ'ունիմք, Իզմիրեանի յեղիպոս առաջնորդութիւնն և պատահած մէկ երկու դէպքերը լաւ իմացողին կը թողումք դատել:

Հաւանական համարուած ընտրելիներու վրայ այսչափ հակիրճ խօսելնէս վերջ, հարկ չեմք տեսներ այլ ևս ուրիշ Եպիսկոպոսներու վրայ ալ խօսիլ: Մեղքիսեղեկ Եպիսկոպոսի վրայ խօսիլ Հայր-Ժէր զի իւր 1885—89 կեանք բազմայ ծանօթ է. եթէ խոհեմութիւն ունենար և զգաստ մնար, թեւեւ ընտրելի լինէր և այս անգամ, բայց փառասէր և իւր անձը ազգէն աւելի սիրող մի Եպիսկոպոսի, քարոզութիւնն ալ շատ է. չեմք գիտեր ո՞ր խելացիին գործն է 91 և 92ի ընդարձակ օրացոյցներու մէջ «Արքեպիսկոպոս» նշանակած զՄեղքիսեղեկ Եպիսկոպոս. մեք որչափ գիտեմք, Գէորգ Կաթուղիկոսի Ժամանակ, սոսկ Եպիսկոպոս էր, Մակար Կաթուղիկոս ալ չ'բարեհաճեցաւ «Արքեպիսկոպոսական» աստիճան տալ նմա. ուրեմն Պաղտատեանը տուած պէտք է լինի այդ աստիճան, իբրեւ չոր Բեթաբա՝ Մեղքիսեղեկէ ալ բաւ արդիւն...:

Եզրակացնելով մեր յօդուած, ի բոլոր սրտէ կը բարեմաղթեմք որ Աստուած ազգին համար մի արժանաւոր եկեղեցական ընտրելու կարողութիւնը տայ պատգամաւորաց. անունին հրապարակ չ'եղած արժանաւորներ կարող են գտնուիլ ի գահ Հայրապետութեան ընտրելի:

ՃՇՄԱՐՏԱԽՕՄՆ,

ԶԱՐԵՐՈՒ ՄԻ ՆՈՐ ՊԱՇՏՊԱՆ

Մարտիոյ հայտնութեանց ասպարէզ «Արմէնիա» լրագրոյն 50րդ թուոյն մէջ «Հայրապետ» ստորագրութեամբ չարերու մի պաշտպան տեսանք, որ պաշտպանել կը յանդգնէր զԳ. Տ. անուն մի անձ՝ որ ո՛չ միայն կրթութեան եւ մարդկութեան հանգամանքներէն զուրկ է այլ եւ բանականութենէ եւս թափուր:

Պ. Ուղղագա՛տ, եռանդով կը գովարանես այնպիսի մի անձ՝ որ իւր կոչտ ու բիրտ վարմունքին համար անցեալ տարի նախորդ հոգաբարձութենէն վճռուած է վարժարանէն, եւ որ մի քանի ամիս սրճագործներու քով աշակերտելէ յետոյ իւր խոլական բնաւորութեամբ չի կարողացաւ հիմ դնել եւ ո՛չ մի տեղ, եւ սկսաւ խանութէ ի խանութ, տունէ ի տուն չըջել, լալ եւ ողբալ, ինչ ընէ ապիկարը. ուրիշ բարեմասնութիւն չ'ունի լալն է միայն իւր ղէնքը. վերջապէս ներկայ հոգաբարձութիւնը վերստին զայն իւր վարժարանի մատաղերամ մանկանց աւագի ուսուցիչ կարգեց, վասնզի ասիկէ առաւել արժէք չ'ունէր նա իր թէ նախորդ հոգաբարձութիւնը զայն վճռեալուն համար՝ գէշ եւ անիրաւ բան մը ըրած լինէր. իսկ ներկայ հոգաբարձութիւնը լաւ եւ իրաւացի բան մը. . . «վա՛յ քեզ քաղաք որ թագաւորդ մանուկ է»:

Պ. Զարախո՛հ, այն չարալեզուն զոր կը դրուատես՝ հազիւ հազ մի քանի ամիս կը պաշտօնավարէ՝ վերստին կ'սկսի իւր խելքի փշածին հետեւիլ. հակառակ այնքան խրատուց եւ ազգարարութեանց՝ զոր իրեն անշուշտ ըրած են իւր պաշտպան հոգաբարձու Տեարք առ ի ուղղութիւն կամակոր բնաւորութեան. բայց ի զու՛ր, վասնզի «սեւին սապոն խնդին խրատն ինչ ընէ» ի մի բան, տեղւոյս ընդ. Ժողովը Դեկ. 25ին վերջնական վճիռ կուտայ Զեզ նմաններուն սիրելի՛ եւ մեզ նմաններուն ստեղծելի եւ զգուշելի անձն զպրոցէն արտաքսել բոլորովին:

Պ. Զարախո՛տ կը յաւակնիս գովել այնպիսի չարասիրտ մի անձ, որ կ'առնու Տնօրէն Դասատուին զպրոցական ծրագիրն՝ եւ մի քանի ուսմանց առարկայներու անուններն տեղափոխելով՝ այսինքն առաջ գրուած առարկայն ետ դնելով եւ ետ գրուածը առաջ, կ'երթայ նախորդ հոգաբարձութեան Ատենապետ պ. Կ. Այոբեանի եւ ծրագիր մը չինցի ըսելով կը պարծի. Ատենապետը զայն Տնօրէն Դասատուին կը յանձնէ, որ տեսնելով իւր գծած ծրագրոյն ընդօրինակութիւնը կը խայտառակէ այդ բանաբաղ Մարկիոնդ:

Պ. Խառնակիչ, ուղղամտութիւն թէ չարամտութիւն է հարուածել 25 ամեայ մի արդիւնաւոր դասատու մը՝

որ այսքան տարիներէ հետէ իւր կեանք զոհած է Ռուս-
ճուղի մանկանց կրթութեան՝ եւ ունի բազմաթիւ աշա-
կերտներ՝ որք այսօր հեռագրական պաշտօն կը վարեն
գոհացողիչ ամսականներով եւ վաճառականական գոր-
ծերով զբաղեալ ընտանիքներ եւ զաւակներ կը պահեն։

Այսպիսի ժրջան դասատուի մը սիրտը վիրաւորել, չա-
րակամութիւն, ապիկարութիւն եւ ապերախտութիւն չ'է-
լի։

Սոյն դասատուն ինչպէս հին եւ նոր դպրութեան եւ
լեզուագիտութեան հմուտ՝ նոյնպէս դպրոցական հին
եւ նոր դրութեան նկատմամբ ներշուն եւ փորձառու ըլ-
լալէ զատ՝ ամեն տարի ուսումնական ժողովէն վաւերաց-
եալ ծրագիր եւ դասագրքեր Կ. Պօլսէն բերել ստլով ժա-
մանակիս պահանջած ոգւոյն համեմատ կը վարէ իւր վար-
ժարանը։

Պ. Չարախօս, Ռուսճուղի ընդ. ժողովոյն գէմ կը խօ-
սիս, որ Ձեր Գ. Տ.ը վարժարանէն խալաւ արտաքսել
վճռած է կարի արժանի իրաւամբ։

Դու կը ժպտիս այնպիսի մը գովելու ան ալ «Արմէնիա»ի
նման մի գայթակղեցողիչ թերթի մէջ՝ որ աւանց ուղղա-
խոհ դատողութեան կը հրատարակէ ամենայն ինչ ան-
խափ՝ բաւական է միայն որ հրատարակուած նիւթն Մ.
Թիւթիւնճիէֆի ընդգէմ լինի։

Պ. Չարանենք, պաշտպանածդ Ձեզիւղեմներուն համար
սիրելի է այնպէս չ'է. աներկրայ եմք այս մասին «նման
զնմանն սիրէ»։ անտարակոյս եմք այս մասին՝ երկու խենդ
երբ իրարու ընկեր լինին երջանիկ են, իսկ մէկ խենդ մէկ
խելացի ապերշնիկ։

Ուրեմն այդպէս. ծպտեալ ստորագրութեամբ մի կ'ընէր
ինձ գէմ բանագող, աղտեղի գիմակղ վա՛ր աւանայինք մի
անգամ թէ ինչ տեսակ արարած ես, խրոտիլակ ես թէ
հրէ՛շ. կիզծ շղարշդ ի բայ պարզէ, որպէս զի տեսնենք
բացարձակապէս թէ ուղղամիտ ես թէ ո'չ չարամիտ մի
խայտառակ իմաստակ, եւ Ռուսճուղի աղնիւ ազգայնոցս
գլխուն մի չար ախտաւատ փորձանք։

Եթէ այսչափով չը կարեւա քու չարաշունչ լիզուղ գիտ-
ցած լինիս որ քու պաշտպանած Գ. Տ.ի նկատմամբ Տը-
նօրէն Դասատու պրն. Գ. Օվաճգեան պատրաստ է ման-
րամանօրէն նկարագրել յիշեալ սիրելիիդ բոլոր անվա-
յել վարմունքներն, թէ ի վարժարանի թէ յ'եկեղեցւոյ
եւ թէ ի փողոց։

Մ. Թ.

Յունուարի 26ին Թիֆլիսի եկեղեցիներում կա-
տարուած ընտրութիւնների ժամանակ եկեղեցական
պատգամաւորներ ընտրուեցան հետեւեալ անձինք։

1) Վերայի Ս. Խաչ եկեղեցում — Մ. Աբեղեան,
Ս. Տ. Գրիգորեան, Ս. Մովսիսեան։

2) Չրկինենց Ս. Կարապետ եկեղեցում — Արզու-
թեան Երկայնաբազուկ (Թիֆլիզի քաղաքագլուխ),
բժ. Աւթանդիլեան, Մ. Միրզոյեան։

3) Գամօնենց Ս. Գէորգ եկեղեցում — Մէլիք Ղա-
րաբեօղեան, բժ. Բաբալեան, Կիրակոսեան։

4) Վանքի Մայր եկեղեցում — Ա. Մանթաշեան,
Ի. Բուզդանեան, Գ. Արծրունի։

5) Սուրբ Նշան եկեղեցում — Ղանդուրաբեան,
Յ. Տէր-Կարապետեան, Գ. Միրզոյեան։

6) Ջգրաշենի Աւետեաց եկեղեցում — Իշ. Ն.
Ամատունի, Ա. Ղորղանեանց. Եղեկեան։

7) Մոզնու Ս. Գէորգ եկեղեցում — Ա. Յովհան-
նիսեան, Գ. Սունդուկեան, Գասպարեան բժ.։

8) Նորաշենի Ս. Աստուածածնայ եկեղեցում —
Խ. Արզումանեան, Մ. Թամամշեան, Ա. Բարխու-
դարեան։

9) Բեթղեհեմի Ս. Աստուածածնայ եկեղեցում —
Արխանեան, Ն. Խոսրովեան, Խուզուդեան։

10) Քարափի Ս. Գէորգ եկեղեցում — Ի. Յա-
լութիւնեան, Ի. Բաբախանեան, Ս. Լիսիցեան։

11) Հրեշտակապետաց եկեղեցում — Արամ Չեր-
քէզեան, Ս. Տէր-Մովսիսեան, Բ. Միրիմանեան։

12) Ս. Սարգսի եկեղեցում — Վ. Սուքիասեան,
Ն. Փիլոսոփեան, բժ. Տէր-Գրիգորեան (Թիֆլիսէ)։

ՆՈՐ ԴԱՐ

ԱՐԲԵՑՈՂԻ ՄԸ ԴԻՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ

—o—

Յուսա՛, երջանիկ պիտի ըլլաս, խմէ՛ երջանիկ ես։

Եթէ քու շիշ է միշտ լեցուն

Ունիս երկրի արքայութիւն։

Ձը խմողները կանգուն կեցած տակառներու կը
նմանին, որոնց դիրքը ընդունակ չէ չըջան ընելու
եւ յառաջդիմելու։

Ձար մարդիկ երգ չունին, ըսեր է բանաստեղծ
մը, խմող մարդիկ ալ գաղտնիք չունին. վասնզի
Նոյն-նահապետականք ծուռ կը նստին, բայց շիտակ
կը խօսին։

Գինին երբեմն կը պղծուի խմուելով այնպիսի
մարդոց կենացը, որոնք մէկ գրչի հարուածով միլ-
իոնաւոր մարդոց մահուան պատճառ կ'ըլլան։

Գինին պերճախօսութեան անմահ ոգին է որ
մահկանացուացս բերնով խօսելու շնորհը կ'ընէ մեզ։
Յուսահատութիւնը Բաքոսի աշակերտներուն գրնէն
կը նայի, բայց ներս չը կրնար մտնել։


ԱՅԼԵՒԱՅԼՔ

Քաղաքիս պաշտօնական մարդահամարէ առնելով կը հրատարակենք հետեւեալը որ ցոյց կուտայ անցեալ 1891 տարւոյ մեռեալներու թիւը:

	ար.	էգ.	Յոռւոր.	Մահ.	Հայ.	Հրեայ.	Պաշ.	Բողոք.
ՅՈՒՆՎ.	36	33	25	31	5	8	0	0
ՓԵՏՐ.	30	41	26	37	2	4	2	0
ՄԱՐՏ.	39	28	28	32	2	4	1	0
ԱՊՐԻԼ.	35	35	39	26	1	4	0	0
ՄԱՅԻՍ.	34	25	29	22	3	3	1	1
ՅՈՒՆԻՍ.	28	20	25	20	1	1	0	1
ՅՈՒԼԻՍ.	26	36	36	18	3	3	1	1
ՈԳՈՍՏ.	31	44	36	30	2	4	3	0
ՍԵՊՏ.	14	17	12	10	2	3	2	2
ՀՈԿՏ.	28	25	29	19	1	4	0	0
ՆՈՅԵՄ.	26	25	25	20	3	2	1	0
ԴԵԿՏ.	35	35	36	23	3	7	1	0
ԳՆԱՅ.	362	364	346	288	28	47	12	5

Ամբողջ մեռելոց թիւն է 726. որոց 362ը տղական և 364ը իգական սեռի կը պատկանին:

Լոնտոնի բժշկական տիպագրի միջոցով է միջազգային համագումար հրաւիրել Էնֆէն-Էնց-ի դէմ միջոցներ քննելու համար. համագումարը Մարտ ամսոյ մէջ տեղի պիտի ունենայ:



ԺՈՂՈՎԱՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆ

"ԴԱՆՈՒԲ, ԼՐԱԳՐՈՅ

Դ ՐՈՒՍՃՈՒԳ [ՊՈՒԼԿԱՐԻԱ]

Պատիւ ունիմ՝ ծանուցանել արգոյ հասարակութեան թէ՛ տպարանիս մէջ կը տպագրուին Հայերէն, Պուլկարերէն և Ֆռանսերէն լեզուներով ամեն տեսակ գործեր, ինչպէս են, վաճառականական տետրակներ, չրջաբերական, առևտրական ցուցակներ, այցեւորման, ընկալագրեր, հարսանեաց հրաւիրագրեր, մահազոյժի ազգեր են են. յաճախորդք կը հրաւիրուին գիմել խմբագրութեան հասցէին:

ՆՈՐ ԼՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆՈՐ ԲՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Ի ՊԷՏՍ

ԱԶԴԱՅԻՆ ՎԱՐԺԱՐԱՆՈՅ

ԱՇԽԱՏԱՍԻՐԵԱՅ

Կ. Ս. ՀԱՆԻ ՍՏԵՓԵՆԻԱՆ

Նախկին աշակերտ Պէրպլերիան
փարժարանի ՚ի Պոլիս

ԲՈՒՍՃՈՒԳ

ՏՊԱԳՐ. Մ. Ս. ԹԻԻԹԻՆՃԻԿԻ

— 308 —

Ազգ. վարժարանաց համար պիտանի մի գրքոյկ է. կը յանձնարարեմք մեր ամեն տեղի Պատ. Դատարանաց որ նախակրթարանի աշակերտաց գաղափար մը տալու համար բնագիտութեան վրայ, քաջալերեն մեծարոյ հեղինակին տոյն փոքրիկ գործն:

Կը վաճառի հեղինակին մօտ. գին 1 ֆր:

Փափաքողք պարտին գիմել հետեւեալ հասցէին՝

Mr. G. Hadji Stepanian

(BULGARIE)

CHOUMLA

ԾԱՆՈՒ ԳԻՐԲԵՐ

Հետեւեալ գիրքերն կը ծախուին «ԴԱՆՈՒԲ»-ի խմբագրատան մէջ. իրենց առջեւ նշանակուած գիներով եւ փոստի ծախքը խմբագրատունէն վճարուելով:

ԲԱՅՅԻ, ԽԵՂԹԸ (Արկածներ վերջին Ռուս-թուրքական պատերազմից) եւ ԶԱՎԱԼԻԳԻՆ, (Մի պատկեր նրա արշաւանքից). երկուքը մէկտեղ մէկ հատորի մէջ ամփոփուած. Բ. Տիպ: 8 ֆր. 50 սանթիմ:

ԲԱՅՅԻ, ԴԱՐԱՐԱՆԻ ԱՍՏՂԱՅԷՏԸ Անդրկովկասեան պատմական վէպ. 5 ֆր. 50 սանթիմ:

ԲԱՅՅԻ, ԵԱՅԷՆԻ ԵՏԱԿԸ 5 ֆր. 50 սանթիմ:

ԲԱՅՅԻ, ՄԻՆԸ ԱՅՍՊԵՍ. ՄԻԻՍԸ ԱՅՆՊԵՍ Պատկերազարդ վէպ. Թիֆլիսի վաճառականների կեսնքից:

ԲԱՅՅԻ, ԿԱՅՏԵՐԻ ՎԵՐՋԸ 1 ֆր. 50 սանթիմ:

ԲԱՅՅԻ Դատկերը խոշորադիր. 2 ֆր:

» » աւելի փոքր. 1 ֆր:

ՏԷՐ ԵՒ ԽՄԲԱԳԻՐ Մ. Ս. ԹԻԻԹԻՆՃԻԿԻ

ԲՈՒՍՃՈՒԳ ՏՊԱՐԱՆ Մ. Ս. ԹԻԻԹԻՆՃԻԿԻ

Скоропечатница на Спиро Гулабчиев.